

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՑԻ ԱՐՃԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Ընտանիքի արհեստագործութիւնը իւր որակութեամբ և քանակութեամբ պայմանաւորում է ընտանիքի ընդհանուր կեանքով: Ուստի նախ քան նրա արհեստագործական աշխատութիւններին անցնելը, ծանօթանանք գիւղացու ընտանեկան կեանքի հետ ընդհանրապէս: Մենք ի նկատի ունինք, զուտ գիւղական ընտանիքները, որոնք գանւում են քաղաքի ազգեցութիւնից տակաւին ազատ մնացած գիւղերում *): Իսկ ընտանիքի մասին խօսելուց առաջ պիտի գաղփար ունենանք առհասարակ հայկական գիւղի մասին:

Հայկական գիւղը ընկած է շատ անգամ որևէ լեռնալին մակերեսոյթի վրայ, կամ մի ձորի մէջ: Սրա առաջին պատճառը հայոց աշխարհի խորդուրորտ մակերեսոյթն է, բայց սրան միւս կողմից նպաստում է կեանքի անտպահով գրութիւնը: Նմանօրինակ հանգամանքների պատճառով, տները չեն կազմում կանոնաւոր շարքեր, այլ անկանոն կերպով ցըռուած են, շատ անգամ էլ ալնպէս, որ մի տան կտուրը

*) Անշուշտ մանաւանդ արդպիսի գիւղերն ի նկատի ունի պ. Ղորդաննանց, որ գաղպատում է ասելով. «Մեր աշխարհը մեր ամբողով հանգերձ դեռ շատ հեռու է մեր իդէալներից, մեր չորս կողմը թանձր ոգիտութիւն է. ժողովուրդը աղքատ, բարքերը, ընդհանրապէս, նահագետական, ամէն մի աւան ապրում է իր սովորութիւններով, իր ճաշակներով, իր չարն ու բարով....» Մեր երկրի ամբողջ տարածութեան վրայ դուք ոչինչ ընդհանուր չէք գանի, ամէն մի գիւղ իր առանձին կեանքն ունի, արդ կեանքը խիստ որոշ սահմաններ ունի, արդ շրջանները նոյնքան հին են, որքան և ինքը կեանքը» («Սշակ» 1896, № 66).

միւսի համար բակի տեղ է ծառալում։ Հասկանալի է, որ այս գեղագում իսկական փողոցների մասին խօսք լինել չէ կարող։ Դիւզացին անցուդարձ է անում բակերով և կտուրներով, որպէս իրան յարմար է թւում և ոչ ոք նրա գէմ չէ ըստոքում։ Ուստի և որոշ, սահմանափակ բակեր չկան։ Դիւզացին պատնէշները չէ գնում իւր և հարևանի մէջտեղում։ Խսկ պատնէշները կամ չափառները գտնուում են կամ այդիների, պարտէզների շուրջը, կամ գիւղի ծալբերում ընկած բակերում (արտաքին թշնամու դիմաց) *).

Դիւղի բնակիշների մէջ սովորաբար գորութիւն ունին ջերմ փոխադարձ յարաբերութիւններ, թէև գիւղը ամբողջովին վերցրած՝ քիչ յարաբերութիւն ունի հարևան գիւղերի հետ, որովհետեւ ճանապարհները շատ անգամ գժուար և վտանգաւոր են։ Իւրաքանչիւր հայ գիւղ ունի իւր մօտակալքում կիսավայրենի մահմեդական հարևաններ։ Բացի այդ, Տաճկա-Հայաստանում մինչև օրս էլ, իսկ Անդրկովկասում մինչև վերջին տասնամենակները, կառավարութիւնը, օրէնքները սակաւ են կարողանում իրանց ապահովացնող ազգեցութիւնը իրօք արդիւնաւոր անել։ Ահա թէ ինչու իւրաքանչիւր գիւղ ապրում է իւր առանձնացած կեանքով, որը արտայաւում է մանաւանդ այն հանգամանքի մէջ, որ երբեմն իւրաքանչիւր գիւղ իւր սեպհական բարբառն ունի, և չնայելով որ ամենքն էլ հայերէն են խօսում, ալ-

*). Համեմատութեան համար կը դնենք ալստեղ Շապէնի նկարագրութիւնը մեր դարի առաջին տասնամենակներից։ Ելիշինչ աւելի տղիզ բան չկալ, որքան Հայկական նահանգի գիւղը։ հողով ծածկուած փոսեր, առանց որն է կարդի և միմենացից բաժմանուած դարշանուտ աղբակուտերով կամ ոչ պակաս հոսուած լճակներով։ փողոցները կամ շատիզները ոլորւում են բնակարան ներկալացնող հիւզերի կտուրներով։ ալդ է գիւղի ընդհանուր պատկերը, Աւելի ցածր տեղերում գիւղերը պակաս տպեղ են։ Աչքը զուարճանում է կանաչազարդ ալպիներով և անտառներով, որոնք ծածկում են գիւղի մերկութիւնը, որպէս զարդարունք։ Բայց հապէս բոլոր ալդ գիւղերը միմանց նման են (Շոպեն. Աշոր. Պահ. Օտր. 484).

Նուամենալիւ մէկ գիւղը միւսին հեշտութեամբ չէ հասկանում:

Այնուամենալիւ համագիւղացի ընտանիքների մէջ, ինչպէս առօւեցաւ, տիրապետում է բաւական բարեկամական լարաբերութիւն: Իւրաքանչիւր գիւղացի և իւրաքանչիւր ընտանիք միշտ պատրաստ է իւր համագիւղացիներին գործով և խորհրդով օգնական հանդիսանալու: Որպէս օրինակ, կարող ենք առաջ բերել հետևեալ սովորութիւնը: Հարիւր ընտանիքից բաղկացած մի գիւղում կան օրինակ 20 նիւթապէս աւելի ապահով ընտանիքներ, որոնք սեպհական գութան ունին, որովհետև վերջինս բաւական թանգ է արժենաւմ: Իւրաքանչիւր գութանատէր կարող էր իւր գութանից առանձին արդիւնք ստանալ (վարձով տալ և ալլն): Սակայն արդ չէ տեղի ունենում նահապետական գիւղերում: Միւս կողմից մի գութանը պիտի ունենայ 10 - 12 զլուխ անասուններ *), որը նոյնական հազիւ ընտանիքներ կարող են ձեռք բերել Եւ ահա գութանատէրը հարացաշ է կազմում մի շարք ուրիշ ընտանիքների հետ: Իւրաքանչիւրը սրտեցից ներկայանում է իւր ունեցած անասուններով: Այնպէս որ, հարաքաշի անդամների մասնակցութիւնը համահաւասար չէ: Բայց և այնպէս հարաքաշը հերկում է իւր բոլոր անդամների հոգերը: Այս դէպիքում ուշադրութեան է առնւում մասնակցող ոլժերի (մարդ թէ անտուն) թիւը. իսկ գութանը շատ անգամ հաշւի շեն գցում: Հետաքրքիրը և ընկերասիրականը այստեղ այն հանգամանքն է, որ իւրաքանչիւր գութան ունեցող միանում է միայն գութան չունեցողների հետ և այնպէս կազմակերպում են միութիւնը, որ ամենաաղքատ գիւղացու գործն էլ գլուխ է գալիս:

Այս օրինակից տեսնում ենք մենք նախ, որ գիւղացի-

*) Գութանով աշխատելը դժուար գործ է. Խիստ մեծ ու աղեղ գութանին լծում են երրեմն 14 զուտ եղ կամ գոմեց. չորս աղամարդիկ անխճակ կերպով քշում են անասուններին, իսկ հինգերորդը գութանն է կառավարում: (Շոպեն. Աշտա. Շտր. 737.

ները հարկաւոր գէպօւմ կարսղանում են միացնել իրանց ոլժերը, իսկ միւս կողմից, որ հարուստները բաւական եղայրաբար են վերաբերում գէպի իրանց աղքատ համագիւղացիները: Նոյնը երևում է և հետևեալ հանգամանքից:

Իւրաքանչյիւր գիւղում կան միքանի և մեծ օջախները *): Սրանք աւելի մեծ և աւելի ապահովուած ընտանիքներն են: Պէտք է նկատել, որ գիւղական ընտանիքի մեծութիւնը և նիւթական ապահովութիւնը համարեա միշտ միմեանցով պարմանաւորուած են: Երբ ընտանիքը մեծ է, նա ապահովուած էլ և ընդհակառակն: Այդպիսի ընտանիքները պահում են իրանց արժանաւորութեամբ, և որա համեմատ էլ լարգանք են ստանում համագիւղացիներից: Գիւղացու աշքին մեծ նշանակութիւն ունի մեծ օջախի ողոքին կամ աղջիկը լինելը: Եթէ որևէ գիւղացի պատահմամբ հարստանում է, բայց իւր զարմունքը, ընաւորութեան մէջ մութը կէտեր է ունենում, ապա այդ ախուր հանգամանքը բացատրում են ասելով, թէ նա իսկական օջախի սերունդ չէ: Գիւղացու այդպիսի հայեացքը մեծ օջախների վրայ, անշուշտ առաջ է գալիս նրանից, որ մեծ մասամբ մեծ օջախները բարեկամաբար են ապրում միւս գիւղացիների հետ:

Այժմ անցնենք առանձին ընտանիքին:

Արտաքին աննպաստ հանգամանքների ազգեցութեան տակ, հայ գիւղացին սովորել է միիթարութիւն որոնել իւր ընտանիքի գրկում: Վերջինս իւր զուտ գրաւթեան մէջ ներկայացնում է մի նախահայրական միութիւն, որը ունի չորս

* Հատ անգամ մարդ զարմանում է, մտնելով մի մեծ գիւղական ընտանիք. նա բազկանում է քանի, երեսուն և երբեմն քառասուն հոգուց. — զա մի փաքրիկ պետութիւն է, որի մէջ տիրում է խորին ներդաշնակութիւն: Ալեոր պատերը զարենոր հասակներով թուով մի քանի եղբալբներ—դեռ կենդանի են, կենդանի են և ծերունի պառաւները: Նրանց ըրջապատել են որդիները, թռոները, ծռոները, — մի քանի սերունդ իրանց կնիկներով և զաւակներով: (Բաֆֆի: Հայ կինը. եր. 9):

Տես նոյնպիս Միւրախորեանց ձանապարհորդ. հատ. II եր. 26.

անխուսափելի սկզբունքներ: 1) Հնագանդութիւն և յարգանը ընտանիքի ըոլոր անդամների մէջ: Խւրաքանչվրը հնագանդ պիտի լինի իրանից տարիքաւորներին, իսկ հուաստար գէպքերում իրական սեռը պիտի հնագանդի տրականին: Միայն թէ արդ հնագանդութիւնը զինուորական խըստութիւն չունի, այլ կակուղ, զիջողական ընտառութիւն է կրում: 2) Ամօնթխածովթիւն *): Ընտանիքին պատկանող կնամարդը պիտի թագցնէ իւր գէմքը հոսակաւոր տղամարդկանցից (Էլ աւելի խստութեամբ օտարներից) և հարկաւոր գէպքում տղամարդկանց հետ պէտք է թէ ձայնով, այլ գըշխի շարժումներով խօսի. Նոյն իսկ ջահիլ կնամարդիկ պառաւ կանանցից նոյնպէս պէտք է թագնուին և տնիօս մնան: 3) Մանաւանդ լատուկ է գիւղական ընտանիքին ամենալուրջ ողջախոհութիւնը **), որը անպայման կերպով պիտի պահպանուի: Անժուժկալութեան մէջ մեղագրուած կինը այլ ևս հնար չունի գիւղում մնալու: Նոյնպիսի ողջախոհութիւն պիտի ունենայ և տղամարդը: 4) Վերջապէս ընտանիքը ու-

*). Մանաւանդ խիստ ամօնթխածութիւն է պահանջում աղջկեներից, և 4—5 տարեկան հասակում նրան արգելում են տղաների հետ խաղալ (եր. 13): Աղջիկը արժմ 13—14 տարեկան է: Ազդ տարիներում հասունանում է նաև մմնակ տնից դուրս չեն թողնում: Նա գնում է արգին, պարտէզը, դաշտը, մօր նետ միասին կամ տան հարսներից մէկի հետ: Միշտ երկու հսկող աշքեր անպակաս են նրա մօտից: Նա գնում է աղրիւրից ջուր բերելու հարեւաների աղջկեների հետ: Միքանիսը միայն հուաքում են և խումբ են կազմում, գրա համար որոշուած են վազ առաւատեան և երեկոյեան պահերը, երբ փողոցները դատարկ են մարդիկներից (Պաֆֆի, Հայ կինը, եր. 13 և 17):

**). Կնոջ համարձակ նալուածքը, մի բառը օտար տղամարդի հետ, իսկուն բամբասանքի առարկալ է զատանում: Ամունական անհաստարմութիւնը խիստ հազուազիւս է զիւղերում, և եթէ լինում են օրինակներ, պատմւում են մահով: խանդուտ աղամարդը ծածուկ կամ զալանի սպանում է նրան, և հոսարակաց կարծիքը արդարացնում է աղդ եղեռնագործութիւնը իսկ եթէ ամուսինը համբերում է կնոջ անհասկութեանը, նրա ընտանիքը դուրս է ձգում զիւղական հասարակութիւնից (Պաֆֆի, Հայ կինը, եր. 28):

նի և կրօնականութիւն (կրօնասիրութիւն), որը սակալն դուրկ է տեսական-գիտակցական հիմունքներից, որպէս լինում է օրինակ գերմանական-բողոքական ընտանիքների մէջ։ Հայ-գիւղացին աւետարան չէ կարգում և քարոզներ չէ լըսում։ Եատ անգամ նա տեղեկութիւն չունի Մովսէսի զըրքերի կամ Նսալի մարգարելութիւնների մասին։ Մինչև անգամ շատ գիւղական քահանաներ ճիշտը չը գիտեն, թէ արդեօք Գաւիթ Մարգարէն է առաջ եղել, թէ Քրիստոս Ալուամենային գիւղացին զիրծ չէ քրիստոնէական զգացմունքից։ Նա հաւատում է հանգերձեալ կետնքին, բայց առանձին ուշադրութեամբ չէ մտածում նրա մասին։ Քրիստոնէական կրօնը նրա աչքին երկու գլխաւոր կողմ ունի եղբայրասիրութիւն և ողջախոհութիւն։ Նա պաշտում է սուրբերին, զոհ է ըերում նրանց համար, տօնում է նրանց իշտառակը, որովհետև նրանք Յարգասէր և ողջախոհ կետնք են վարելիս եղել։

Մենք խօսեցինք ընտանիքի մշտակալ յատկութիւնների մասին։ Այժմ տեսնենք, թէ ինչպիսի փոփխութիւններ (շարժումներ) են տեղի ունենում ընտանիքի կետնքի մէջ։ Այսեղ նկատում են երկու զոյգ իրար հակառակ շարժումներ, որոնցից մէկ զոյգը ձգտում է փոքրացնել ընտանիքը, իսկ միւսը — մեծացնել։ Առաջին զոյգը կազմում են ընտանիքի որևէ է անգամի մահը և աղջիկներից մէկի պատկելը, Երկրորդ զոյգը — ծնունդը և տաղաներից մէկի ամուսնութիւնը։ Որևէ է անգամի մահը, մանաւանդ տարիքաւորներից, բնական է համարում և քառասունքը անցնելուց յետոյ, մոռացութեան է տրում։ Արօինքն ամենքը նուիրուում են իրանց առօրեալ հոգսերին, թէև հանգուցեալի լիշտառակը միշտ պահուում է։ Աղջիկ պատկելը կատարում է մի որոշ բաւականութիւն զգալով։ Ընտանիքը զգում է, որ մի բեռից ազատուեց։ Այդ երեսյթի պատճառը տնտեսական է։ Բայց Թիւրքաց-Հայաստանում կան և ուրիշ կարեսը պատճառներ.... Բաւական ենք համարում նկատել, որ թէև հայ գեղջկուհին շատ աշխատասէր է, այնուամենայնիւ, որտեղ

երկիրը անազահով է, նա շատ անգամ մի բեռն է կազմում գիւղացու համար, Գիւղական կնամարդը հազիւ է կարողանում գիւղից հեռանալ, ուստի և չէ կարող բաւականաչափ մասնակցել դաշտային աշխատանքներին, որը գիւղացու համար առաջին տեղն է ըստում: Ի հարկէ դաշտային աշխատանքներից հեռու մնալով, հայ գեղջկուհին առել է իւր ձեռքը տնալին աշխատանքը: Ուստի մշտապէս ընտանիքին պատկանող կնամարդը համարում է որպէս մի օգտակար անգամ, Խոկ մի չափահաս աղջիկ, որի զիրքը ընտանիքի մէջ ժամանակաւոր և անհաստատ է, պէտք է ըստ կարելոյն վաղօրօք հեռացնուի ընտանիքից, մանաւանդ որնա պէտք է տեղ բաց անի սպասուելիք հարսների համար:

Ընտանիքի որդիները նոյնպէս վաղ են ամուսնանում: Այդ հանգամանքը երկու պատճառ ունի: Նախ որ ծնողները, քանի դեռ կենդանի են, կամ հնում են տեսնել իրենց թոռներին և երկրորդ՝ այդպիսի վաղմժամ ամուսնութիւնը գործադրում է իր ժուժկալութեան նպաստաւոր միջոց: Երիտասարդ գիւղացին, մինչև ամուսնանալը նոյնքան անարատ է, որքան իր հարսնացուն: Որդուն ամուսնացնելու հարցը սովորաբար ծնողներն են զարթեցնում: Որդու կամքը հազիւ են հարցնում: Նա իրան բախտաւոր պիտի համարէ, եթէ պատահմամբ կամ երեխայ ժամանակից, ծանօթ է եղել հարսնացուի հետ: Հակառակ գէպքում պիտի ծանօթանալ նրա հետ միայն պսակադրութիւնից լետոյ: Դա ի հարկէ, ամօթիածութեան և նահապետական հնագանդութեան մի չափազանցութիւնն է:

Տղալ գաւակի ծնունդը շնորհաւորում են ուրախութեամբ: Ինչ որ տեղի չէ ունենում՝ եթէ ծնուած երեխան աղջիկ է: Արա պատճառը պարզում է վերոյիշեալ հանգամանքներով:

Կրաքանչիւր ընտանիքի մէջ տեղի ունեցող վերջին փոփոխութիւնը որ կատարում է, դա նրա քայլաւելն է: Ծնողների համար շատ տիսւր բան է, եթէ գեռ իրանց կենդանութեան ժամանակ որդիները բաժանում են մի-

մեանցից: Այդ հանգամանքը անբախտութիւն է համարւում: Սպորարար ընտանիքը բաժան-բաժան է լինում, երբ նրա օնտիւը երեք սերունդի հասել է: Այս գեպքում ընտանիքի բոլոր շարժական կայքը բաժանւում է եղբալըների մէջ: Հայրենական խրճիթը հասնում է անդրանիկ որդուն, որովհետև նա է համարւում ծնողական օնախի ժառանգը: Օնախը, որ գոյութիւն ունի իւրաքանչիւր գիւղական խրճիթում, համարւում է ընտանեկան սրբութիւն: Հարկաւոր գեպքում երգուում են նրանով, օրհնում են և երբեմն էլ անիծում են նրան: Ուստի իւրաքանչիւր եղբալը կամենում է ըստ կարելոյն՝ մօտ ապրել օնախից: Այդ պատճառով էլ երկրորդ եզրոր իրը ընտակարան՝ յատկացնում են նախկին գոմը, որ կպած է խրճիթին: Երրորդի համար էլ ընդհանուր աշխատանքով մի նոր տուն են շինում նոյն բակում (միայն ծալրահեղ գեպքերում որևէ ուրիշ տեղ)... Իւրաքանչիւր նոր օնախ հիմնող եղբալը իւր առաջին կրակը վերցնում է հայրական օնախից:

Բաժանելու գործողութեան մասնակցում են գիւղի կտրեար անձնաւորութիւններն եւ: Այն կալքերը, որոնք բաժանելի չեն (օրինակ ջրազացը, գութանը) կամ գնահատում են և կամ մնում անբաժան, որպէս ընդհանուրի սեփականութիւն:

Մինչև ընտանիքի բաժանուելը, նրա մէջ առանձին—անհատական սեփականութեան մասին խօսք չէ կարող լինել: Միայն հագուստն է, որ այս ու այն անդամի մասնար սեփականութիւնն է համարւում: Նոյն իսկ այդ էլ ոչ միշտ: Նատ անզամ մի ձեռք կարգին հագուստը հագնում է եղբալըներից մէկը կամ միւսը, նայելով թէ նրանցից որը պատահամբ պէտք ունի:

Այսպէս, գիւղական ընտանիքի յատկութիւնների հետ ծանօթանալով, մեզ համար այժմ աւելի հատկանալի կը լինի նրա արհեստագործութիւնը. ընտանիքը ձգտում է

իրեն հարկաւոր պիտոլքները ըստ կարելուն սեփական միջոցներով (սեփական նիւթերից, սեփական գործիքներով և սեփական ոլժերով) պատրաստել: Այդ ձգտումը առաջ է գալիս մի քանի պատճառներից: Նախ որ գիւղական ընտանիքը ունի սովորաբար բաւականաչափ, երբեմն էլ մեծ քանակութեամբ հում նիւթեր, որոնք ճանապարհների աննպաստ հաղորդակցութեան պատճառով, կարող են անօգուտ մնալ: Միւս կողմից գիւղական ընտանիքը բաւական ազատ ժամանակ և ոլժեր ունի, մանաւանդ ձմեռը. կանալք համարեա ամբողջ տարին կարող են առարկաներ պատրաստելով զբաղուել, որովհետեւ շատ չեն խառնւում դաշտալին աշխատանքներին: Երրորդ՝ ընտանիքի բազմանդամութիւնը տնտեսապէս ձեռնուում է դարձնում շատ արդիւնքների պատրաստութիւնը: Չորրորդ՝ գիւղական ընտանիքը անբաւարար հաղորդակցութեանց պատճառով, լարմարութիւն քիչ ունի: Հարկաւոր առարկաները շուկաներից ձեռքբերելու համար:

Եւ ահա իւր նպատակին հասնելու համար, գիւղական ընտանիքը իւր տնտեսութիւնը հիմնում է ընդհանրապէս և արհեստագործութիւնը մասնաւորապէս՝ երկու սկզբունքների վրայ:

1. Ընտանիքի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է իւր ոլժերին համապատասխան կերպով մասնակցել ընտանիքի տնտեսութեան:

2. Եթէ որև է գեպքում ընտանիքի ոլժերը անբաւար են, նա առանց ալլեալլի անվարձ օգնութեան է կանչում համագիւղացիներին, որից վերջիններս չեն հրաժարուիլ, որովհետեւ իրանք էլ ուրիշ անգամ նմանօրինակ դրութեան մէջ են լինում և առհասարակ, ինչպէս արդէն նկատել ենք, գիւղացիների մէջ փոխադարձ պաշտպանութիւնը արմատացած սովորութիւն է:

Արհեստագործական աշխատութեան պարագլուխը երբեմն կինն է լինում, երբեմն աղամարդը: Կնոջ գործն է գլխաւորապէս տնալին հիմնական առարկաների և առօրեալ

սպառուող պիտոլքների պատրաստութիւնը, բացի փայտեղենից, կաշեղէնից և սրանց նման կոշտանիւթ առարկաներից։ Խոկ տղամարդի արհեստագործութեանն են վերաբերում լիշեալ կոպիտ առարկաներն և գիւղատնտեսական գործիքները, որոնք համարեա միշտ կարծր նիւթերից են պատրաստուում։

Ա. ԿԱՆԱՆՑ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ,

Այս գէազբում ի հարկէ գործ կատարողն շատ անգամ ոչ թէ կանանցից մէկն է լինում, այլ ընտանիքի բոլոր կինարմատները, որոնք գործում են ընդհանուր ոլժերով և հարկաւոր գէազբում նոյն իսկ երեխաներին էլ մասնակից են անում։ Երբեմն էլ օգնութեան են գալիս ընտանիքի արական անդամները, երբ օրինակ, հեռուց պէտք է հում նիւթբերել։ Բերենք մի շարք օրինակներ։

Հաց թխելը ամենատարածուած և ամենահարկաւոր աշխատութիւնն է ընտանիքի մէջ։ Գիւղական կետնքում, մանաւանդ դեռ լետ մնացած գիւղերում, մսեղէն կերակուրներ սահաւ են գործածում։ Գիւղացու ամենագլխաւոր կերակուրը հացն է։ Ցամաք հաց ուտելը քաղաքում բացառիկ երևոյթ է, իսկ գիւղում շատ սովորական։ Ուստի գիւղական ընտանիքին միշտ հարկաւոր է ունենալ բաւարար քանակութեամբ հաց, այն էլ որքան կարելի է թարմ։

Հաց թխելու գործողութիւնը կատարում է օրինակ, հետեւեալ ձեռով։ Գեղջկուհին խմորը հունցում է տախտակեալ տաշակ մէջ, ուր խմորին խառնում են թթուկխմոր։ Երբ խմորը հասունացած է լինում (հացը եկած է լինում), գեղջկուհին նրանից պիլցեր (գնդեր) է շինում։ Ալդ միջոցին, միկողմից թռնիքը վառում են և լաւ տաքացնում։ Ապա, կանանցից մէկը նստում է թռնիքի մօտ, իսկ աւելի ջահիլները կռմ երեխաները հետզհետէ պիլցերից ըերում են թռնիքի կողքին։ Թիւողը դնում է պիլցերից մէկը մի տախտակի վրայ, ըրացում է (տափակացնում է) նրան և կպցնում

թոնիրի պատին (թխում): Ամեն մի հացը թիսլիս, նա կռանում է գէպի թօնիրը: Երբեմն թօնիրի մօտ նստամ են երկու կանալք, նրանցից մէկը պիլիլը է բացում, իսկ միւսը թխում: Երբ հացը կարմրում է, հանում են նրան մէկ մէկ և շարում խրճիթի պատերի տակ՝ սառեցնելու:

Հացից յետով, զիւղացու կարևոր կերակուրն է կաթնեղէնը առհասարակ և մասնաւորապէս պանիրն ու իւղը: Սրանց պատրաստութեան համար զիւղական ընտանիքները սովորութիւն ունին միմեանց կաթ փոխ տալու: Մի շարք ընտանիքներ, իրանց միքանի օրուայ կաթը փոխ են տալիս մէկ ընտանիքին, որն արգավիսով միանգամից հարկաւոր քանակութիւնը ունենալով, կարող է պանիր կամ իւղ պատրաստել: Ստացած կաթի քանակութիւնը չափում են մի փարտով, որ տնկում են կաթով լիքը ամանի մէջ և նշան անում նրա այն կէտում, որաեղ նա կպչում է կաթի մակերևոյթին: Հաւաքուած կաթը եփում են մի մեծ կաթսալում: Ապա ժողովում են կաթի երեսը (սերը) որից պիտի իւղ պատրաստեն: իսկ երեսը քաշած կաթի մէջ խառնում են ամէրանը, որը (օրինակ Շիրակում) մի խառնուրդ է բոլսերից, թթու խմորից և այլն: Մէրանի ազգեցութեան տակ կաթը ստանում է մածնալին կերպարանք, որի երեսում գեղնագոյն տջուկը է հաւաքուած: Այդ ջուրը զգուշութեամբ դռւրս են թափում: Ապա գեղջկուհին ձեռքը մտցնելով կաթսալի մէջ, հաւաքում է բոլորը և պանիրի կողում կազմում:

Իսկ եթէ կամենում են զօլպանիր ստանալ, գեղջկուհին ձեռքով պանիրի կողումի մէջ մի անցք է բացում, և ձեռքի վրայ պատացնում է կռումն ալնպէս, որ վերջինս գնալով գնալով՝ աւելի մեծ, բայց բարակ է զառնում: յետոյ կարտառում են զօլզոլ և աղում:

Երբեմն էլ շարունակում են աշխատութիւնը ալդ ձեռվ և մի տեսակ՝ պանրալին թելեր պատրաստում: Արդպիսի պանիր պատրաստում են մեծ տօների համար կամ նուէր տալու նպատակով:

Իւղ պատրաստելու համար հաւաքած սերը ածում են

խնոցի մէջ, որը երկու չուանով կախ է արած առաստաղից: Երկու կանայք կանգնում են միմեանցից որոշ հեռաւորութեան վրայ այնպէս, որ խնոցը գտնուում է նրանց մէջ տեղում: Ապա սկսում են խնոցը ճօնել: Ժամանակ առ ժամանակ բացում են նրա բերանը և տեսնում, թէ արգեօք իւղը սկսել է գոյանալ: Հակառակ դէպքում շարունակում են տառանել, մինչեւ որ իւղը կատարելապէս որոշում է: Ստացած թանը, ինչպէս յալտնի է, տալիս է մեզ նաև ազգային թանապուր կերակուրը:

Ուտելիքներից անցնենք ալժմ խմիչքներին:

Ըստանիքը կարողանում է պատրաստել իւր համար օդի և ա: Մենք կը նկարագրենք ալստեղ օղեպատրաստութեան հասարակ անային ձեւը:

Օճախի վրայ գնում են մի պղնձեալ կաթսայ, որը մինչև կէսը լցրած է լինում ցիցիկով (խաղողի մնացորդ՝ գինի հանելուց յետոյ): Կաթսայի մէջ տեղում գրած է լինում մի փոքրիկ անօթի: Կաթսայի վրայ գնում են մի պղնձեալ թաս. թասի յատակը պիտի փոքր ինչ կամարաձև լինի: Թասից կապում են խաչաձև բարակ պարան, որի ծալրը կախուած է լինում դէպի կաթսայում գտնուող անօթի: Ապա կաթսայի և թասի իրար կպած տեղը կաւով կամ խմորով ծեփում են, որպէս զի շոգին գուրս չգնալ: Թասի մէջ ածում են սառը ջուր, որը շուտ-շուտ փոխում են, որպէս զի կաթսայի յատակը շարունակ սառը մնար: Կաթսայի մէջ գոյացող շոգին, կպչելով թասի սառը յատակին, հեղուկ է գառնում, որը կենդրոնանում է կախուած թելի վրայ և կաթկաթում անօթի մէջ: Ալդ հեղուկը օդին է:

Ի միջի ալլոց լիշենք, որ նոյն մետօգով պատրաստում են վարդաջուրը, որ գործադրուում է զանազան նպատակների համար: Հիւանդ աչքերին վարդաջուր են քսում: Ներքին հիւանդութիւն ունեցողներին թարմացնելու համար՝ վարդաջրով նուռ են ուտացնում:

Գիւղական ընտանիքը պատրաստում է նոյնպէս զանազան խեցեղէններ (ամանեղէն): Սրա համար կաւը ձեռք է

բերւում օրինակ, գետակների ափերից. բայց ամեն տեղ ոչ
միենոյն որակութեամբ։ Մաս տեղերից կանալք են բերում,
իսկ եթէ տեղը հեռու է, տղամարդը իր սալլով օգնութեան
է հասնում։ Կաւը լաւ թրջում են և ոտներով ալճան կո-
խատում, մինչև որ նա մածուցիկ գառնար։ Այդ տեսակ
պատրաստած կաւից գեղջկուհին շինում է մի շարք զանա-
գան կրակարաններ, որոնց գլխաւորների մասին գաղափար
կը տանք ալսածեղ։

Քուրան ներկարացնում է ներսը դատարկ մի ուղղա-
հայեաց ցիլինդր, որի վրայ կաթսան են գնում։ Հօրիզոնա-
կան միջնորմով քուրան բաժանում է երկու մասի, որոն-
ցից վերևինի մէջ են կրակ վառում։ Միջնորմը ունի մի
շարք ծակեր։ Նրանցով ներքեւից վերև օդն է անցնում, իսկ
վերևից ներքեւ թափում է մոխիրը։ Քուրայի վերևի մասը
վերջանում է երեք բլրակներով, որոնք կրելով իրանց վրայ
կաթսան, թոյլ չեն տալիս, որ նա իր բոլոր մասերովը
կազէ քուրային, որովհետև հակառակ գէպքում օդի շար-
ժումը կը խանգարուէր և կաթսայի տակի կրակը կը հանդ-
չէր։ Ներքեառմ, առջևի կողմից, քուրան մի ծակ ունի, որ-
տեղից գուրս է թափում մոխիրը և ներս է մտնում հար-
կաւոր եղած օդը։ Քուրան բաւական խորիմաստ գործիք է,
որն անշուշտ արևելեան ժողովրդների փորձառութեան ար-
դիւնք է։ Խնչ էլ լինի, նա համտպատասխանում է Ֆիզի-
կայի ճշմարտութիւններին (օդի նշանակութիւնը՝ ալրուելու
երեոյթի մէջ)։

Մանղալը մի կաւեղէն արկղ է, կաւեալ ոտներով,
տուանց խուփի։ Լինում են զանազան տեսակի մանղալներ,
բայց ընտանիքում աւելի գործածականը մեր նկարագրանն
է։ Լալնութեան պատերի վրայ երեմն մատնաչափ խո-
րութիւններ են լինում, շամփուրների ծալրերը կոթնեցնե-
լու համար։ Մանղալը գործածում է գլխաւորապէս խորո-
ված պատրաստելու համար։ Ածուփը (կրակը) վառում է
անմիջապէս մանղալի մէջ և շամփուրները շարւում են մէկ
պատից գէպի միւսը։

Կաւից նոյնպէս շատ ուրիշ առարկաներ են պատրաստում. օրինակ փեթակներ ցորեն կամ ալիւր պահելու. համար. Այդ փեթակների գլուխը բաց է, ալդուեղից են ներս լցնում ցորենը կամ ալիւրը, իսկ քիչ քիչ գուրս են հանում ներքեւում գտնուող մի բառնցքաչափ ծակից, որը սովորաբար ծածկուած է լինում փոքրիկ բարձիկով կամ շորի կտորով:

Կաւից են շինում նոյնպէս թոնիրը, որը գիւղական տան անհրաժեշտ պիտոյքներից մինն է. Իսկ թոնիր շինելու մասին մենք գաղափար կը տանք լետոր:

Թրծած կաւէ ամաններ շինելու համար գործ է ածւում աւելի նուրբ կաւ: Այդ գործն էլ շատ տեղերում գեղջկուհին է կատարում: Նա գնում է իւր հանդէպ մի հասարակ ախտակ, նրա վրայ փափուկ կաւից ձողիկներ է շինում, որոնց երկարութիւնն և հաստութիւնը համապատասխան են շինուելիք ամանի մեծութեան և նրբութեան: Ցետոյ տախտակի վրայ շինում է նաև մի շարք փոքր և մեծ շրջանակներ, որոնցից իւրաքանչիւրը մի անօթի յատակը պիտի գտառնար: Ապա վերև լիշած ձողիկները փոթաթելով շրջանակի վերևի կողմից, հետզհետէ գոյացնում է անօթը, որը և հարթացնում է կաւախտան ջրով: Դործը կատարում է ընդհատումներով, որպէս զի արգէն շինուած մասերը մի փոքր ցամաքեն: Նրբ անօթները շինուած են լինում, գնում են նրանց տանը կամ գոմում՝ չորտնալու: Թրծելու համար օգտւում են սովորական թոնիրից: Հացը թխելուց լետոր, քանի որ թոնիրը առանց ալն էլ տաքացրած է, զգուշութեամբ շարում են նրա մէջ անօթներն և թոնիրի բերանը ծածկում, որ օդ չանցնէ: Մի քանի օրից լետոր անօթները թրծուած՝ դուրս են հանում թոնիրից:

Փսիաթներ են գործում կնիւներից (եղեգի ճիլերից), որը քաղում են ձրիաբար ջրերի ափերում: Ճիլերը նախ ջրի մէջ են դնում մի շաբաթ, ապա բերում են տուն հիւսում փսիաթներ, առանց որևէ է գործիքի: Փսիաթը լինում է մեծ մասամբ 1 մէտր երկարութեամբ և 2 մէտր լալնութեամբ:

և գործ է ածւում լատակի, երբեմն էլ խըճիթէ առաստաղի համար։ Տղամարդիկ էլ հիւսում են փսխաթներ։

Գերչակի *) սերմից ձէթ են հանում հետևեալ կերպով։ Գեղջկուհին աղանձում է սերմը հասարակ կաւէ ամանում օճախի վրայ, թափում է նրան մէկ երկայն քարի վրայ և փշում մի ուրիշ քարի օգնութեամբ։ Ալդպիսով ստացւում է մի փափուկ նիւթ, որը նա ածում է ջրով լի և կրակի վրայ դրած՝ կաթսայի մէջ, Զէթը լայտնուում է ջրի երեսին, որտեղից նրան հաւաքում են։ Զէթը գործ է ածւում վառելիքի համար։

Սապոնի եւ մոսի պատրաստովթիմը։ Գիւղական ընտանիքները սովորութիւն ունին աշնանը մորթելու մէկ կամ մի քանի գլուխ տաւար, որոնցից բաստրմա են կազմում ձմեռուայ համար։ Ստացուած ճարպից պատրաստում են սապոն կամ մոմ։ Գեղջկուհին եփում է ճարպը կաթսալում, և երբ ճարպը կարգին հալում է, հեռացնում է նրանից մսեղէն մասերը և ստանում մաքուր ճարպ։ Սրա մէջ կալաքար (սօդա) ածելով, ստացւում է սապոն։ Խեկ մոմ ստանալու համար, վերցնում են մի քանի ճիպոտներ, որոնց իւրաքանչիւրից կապում են մի շարք թելեր։ Ալդպէս նախապատրաստած ճիպոտները թաթախում են հերթով՝ հալւած ճարպի մէջ։ Թելերը ծածկում են ճարպի շերտերով։ Թաթախելը կրկնում են միքանի անգամ, ուստի ճարպի շերտերը գնալով գնալով՝ հաստանում են։ Ալդպիսով ստացուած մոմերը ի հարկէ բաւական անտաշ կերպարանք ունին։

Կանանց ամենասովորական և կարևոր գործունէութիւնն է կազմում բրդեղէնի պատրաստութիւնը։ Ամեն բանից առաջ բուրդը պէտք է փոքր ի շատէ նախազատրաստուի։

Բուրդը **) մի քանի ժամ թրջոց գնելուց լետոյ գետակում կամ տաշտի մէջ, լուանում են։ Երբեմն ջրին խառնում են

*) Արէլեանց. Խողահանութիւնը Երեանի նահանգում, սՄշակո, 1884, № 28. գլ. VI.

**) Խետսովъ. Кустарная промышленность въ Закавказье Стр. 14.

փոքր ինչ անալին անասունների մէզ. կարծում են, որ գրանով բուրդը աւելի կտկղում է և ճարպալին նիւթերն աւելի շուռ են ջոկւում: Ապա փռում են բուրդը գետի քարածածկ ափի վրայ և ծեծում նրան թոխաջով (փայտով): Այդ գործին մասնակցում են երկու կանալք ևս, որոնցից մէկը շարունակ ջուր է ածում բրդի վրայ, իսկ միւսը անդադար ծեծում: Բուրդը լուանալուց և չորացնելուց լետոյ, սկսում են նրան անօսրացնել, ալդայիսով մազմզուքը ջոկջոկում են և բուրդը մաքրում զանազան կեղտերից: Այդ գործը կատարում են առանց որևէ է գործիքի, իսկ երշեմն էլ մի փայտի միջոցով:

Այդ կերպ նախապատրաստած բուրդը գործ են ածում օրինակ՝ անկողին լեցնելու համար և ալլն: Խոկ եթէ ուրիշ նպատակ ունին, շարունակում են բրդի նախապատրաստութիւնը: Բուրդը նախ գզում են առանցերքից վրայ: Սա մի եռանկիւնի պրիզմա է, որի մի կողը փոքր ինչ տափակ է և մի շարք երկաթեալ ատամներ ունի: Գզելուց լետոյ, բըրդից թել են մանում ճախարակի օգնութեամբ:

Թելը գործ է դրւում հասարակ գուլպանների համար, որոնց գործում է գեղջկուհին միլերով: Այդ գուլպանները թէև շատ ել նուրբ չեն, բայց բաւական տաք են պահում ոտները:

Շատ անգամ թելը ներկում են զանազան գոլներով: Գիւղական ընտանիքը ստանում է ներկերը զանազան բուսերից, ծաղկներից, արմատներից և ալլն և ներկելու գործն էլ կատարում է ինքը—գեղջկուհին, առանց մասնաւոր գործիքների:

Բըրդի թելից գործում են շալեր, որոնք թէև կոպիտ, բայց շատ գիմացիուն են լինում: Շինազգահրապար շատ հասարակ, նախնական է և շինում է իրանց գիւղացոց ձեռքով (վարպետի կարիք չկալ): Յիշեալ շալերից գեղջկուհին հագուստ է պատրաստում ամբողջ ընտանիքի համար: Բացի շալից, պատրաստում են ընտանիքում նոյնպէս գորգեր, կապերաներ և ալլն: Այս գէպքում գործագրուող գործիքները

նոյնպէս նախնական են և փալտից են զինած։ Մի կտօր շալի վրայ աշխատում են մէկ կտմ միքանի կանալք՝ նայելով կտորի լայնութեանը։ Գորգերն ու կապերտները տան բատակը ծածկելու համար են։ Բացի սրանցից, պատրաստում են ջեղիմներ, մաֆրաշներ և ալլն։

Մենք ի հարկէ միայն օրինակներ բերինք, բայց տալու համար, որ հայ գեղջկուհին անկախօրէն արհեստագործել գիտէ։ Բայց ալդ օրինակները գեռ բոլորը չեն։ Առաջարկում ենք մեր այն ինտելիգենտ երիտասարդներին, որոնք գիւղական կետնքի հետ լաւ ծանօթ են, մանրամասն ուսումնասիրել ալդ նիւթը։

Բ. ՏՂԱՐԱՐԴԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Գեղջկուհին միայն կողմնակի կերպով է մասնակցում բուն երկրագործական աշխատանքներին։ ալդ ասպարեզը գլխաւորապէս տղամարդին է պատկանում։ Ուստի վերջինս ժամանակ և ցանկութիւն քիչ ունի տնալին գործերով զբաղուելու, մանաւանդ որ նա բաւական ճաշակ էլ չունիցը համար։ Բայց նա լաւ է հասկանում թէ ինչպիսի գործիքներ են հարկաւոր իրան՝ երկրագործական աշխատանքների համար, որպէս պէտք է պատրաստել կամ նորոգել, ինչպիսի սալլեր է հարկաւոր իրեն և ալլն։ Իսկ եթէ նակամենում է տնալին գործերին մասնակցել, այն ժամանակընտրում է իւր համար աւելի կոշտ ու ծանր աշխատանք։ օրինակ փալտից տնալին կահ-կարասիք շինելը և ալլն։ Տղամարդն է գլխաւորապէս աշխատում նոյնպէս խրճիթը տունը շինելու վրայ։ Բացի ալդ՝ կաշեղէնը, մորթեղէնը և ալնպիսի առարկաները, որոնց գործածողը տղամարդն է, նախնքն է պատրաստում։ Բերենք միքանի օրինակներ։

Փալտեղէն գործիքները կամ կարասիքը շինում է գիւղացին սովորական հասարակ գործիքներով, որոնցից իւրա-

քանչիւր ընտանիք ունի. և կամ առանց որևէ է գործիքի: Գիւղացին ըստ կարելոյն խուսափում է սօսինձ, մեխ և սրանց նման միացնող միջոցներ գործածելուց: Առարկան շինում են կամ մի ամբողջ կտոր փայտից, կամ թէ մասերը հագցնում են միմեանց: Բնորոշ օրինակ կարող է համարուել խնոցը: Սրան ստանալու համար, գիւղացին վերցնում է մի կտոր գերան, կտրատում է գլանաձև և մէջը դատարկում: Ալդպիսով ստացնում է մի խողովակ, որի մի ծալրը փակ է: Միւս ծալրին, որ բաց է, հագցնում են մի տախտակ, որը խիստ ճնշուած լինելով, ամուր փակում է բերանը: Ապա, գլանական մակերևոյթի վրայ, մէջ տեղում, մի անցք են բացում և ահա խնոցը պատրաստ է:

Տիկներ կամ մօթալներ ոչխարի մորթուց: Ոչխարի գլուխը կտրելուց լետոյ, մարմինը (միսն ու ուկորները) զգութեամբ գուրս են հանում վզի միջով: Ալդ գործողութիւնը հեշտացնելու համար, խողովակի միջոցով փչում են մորթու տակ, որից վերջինս ուռչում է և փոքր առ փոքր պոկում է մսից: Ստացուած ամբողջ մորթին դարձնում են, աղում և չորացնում: Ալդպիսի մորթիների մէջ պահում են պանիր: Նոյն կերպով հանում են եղիւրաւոր կենդանիների կաշին, որոնք կազմում են գինու մեծ տիկերը:

Կոշիկներ եւ զիլսարկներ: Գիւղացին վերցնում է մի կտոր հում (անպատրաստ) կաշի, գանակով մաքրում է մազերը և կարում է նրանից մի զորդ գարշապար, որոնց երկու կողմից ծակեր է բացում և սրանցից ամուր թել է անցկացնում: Ալդպիսով նա ստանում է մի զորդ, թէև շատ կոպիտ և հասարակ, բայց ձրի և լարմար ոտնամաններ, որ տրեխ է կոչում: Տրեխը հագնելիս, ոտը գնում են գարշապարի վրայ և թելը քաշքառում ու ամբացնում: Ի հարկէ ալդպիսի ոտնամանները պատրաստելիս՝ գեղեցկութեան մասին չեն մտածում:

Գլխարկը պատրաստում են ոչխարի մորթուց: Գիւղացին կտրում է մորթուց մի ուղիղ անկիւն կամ տրապեցիական քառանկիւն, որի կողմերը իրար մօտեցնելով՝ կազմում է

գլան կամ կօնուաւ Ապա ներքին կողմից ծածկում է գըլ-խարկը կտաւով կամ մի այլ չթեղէնով:

Ածուխ: Գիւղացին բերում է այգուց կամ անտառից փայտ և իր բակում կտրատում է ալնպէս, որ կտորները երկու տեսակ երկարութիւն ունենան, օրինակ մէկը լինում է 1 արշին, իսկ միւսը կէս արշին երկարութեամբ: Ապա բակում մի փոս է քանդում և հողը գուրս տալով պահում է, որովհետև յետով հարկաւոր է գալու: Փոսի լայնութիւնը լինում է օրինակ 4 - 5 արշին: Յետով փոսի կենդրոնում թաղում է մի գերան 2 - 5 արշին բարձրութեամբ: Գերանի շուրջը դնում է փոքր ինչ լարդ կամ չոր խոտ: Գերանի շուրջը, փոսի մէջ, շարում է (կանգնեցրած) կարճ փայտերը, յետով նրանց վրայից երկարները: Փայտակոյտի վրայ չոր լարդ է ածում և յետով ամբողջ շէնքոը ծեփում փափուկ հողով, ալնպէս որ միայն ներքեմ մասը բաց մնայ: Վերջապէս գիւղացին բարձրանում է ալդ կոյտի գլուխը և դուրս հանում գերանը, և այդպիսով կազմուած խողովակի (գերանի տեղը) մէջը կրակ է գցում: Երբ կրակը մի փոքր վառում ու տարածում է, ներքեմ մասն էլ հողով ծեփում է: Քիչ ժամանակից յետով խողովակի բերանն էլ լարդ է խըցկում և հողով փակում: Միայն տեղանուն ճեղքեր է թողնում, որ օդը փոքր ինչ անցնել կարողանայ: Ալդպէս մընում է միքանի օր, մինչև որ ճեղքերից այլ ևս ծուխ չէ դուրս գալիս: դա ցոյց է տալիս, թէ փայտն արդէն ածուխն է դարձել: Ալժմ հողը հեռացնում են և ածխացած փայտերը անմիջապէս կօտրատում են և ցրւում, որովհետև դեռ ածուխը տաք է և հակառակ դէպքում կարող է բռնկուել (ալբուել):

Մենք նկարագրեցինք ածուխ պատրաստելու աւելի զարգացած եղանակը: Ստկայն յետ ընկած, մանաւանդ անտառներով, հարուստ տեղերում, կալ աւելի հասարակ միջոց: Ահա թէ սասաւնցիք ինչպէս են ածուխ ձեռք բերում:

«Երբ մի հին կոճդ դադարում է այլ ևս շառաւիղներ արձակելուց, նրան ուղղակի կրակ են տալիս, որ իրան-իրան

ալրուի: Աեռնալին կածաններով և ձորերով անցնելիս՝ գուք լաճախ կը հանդիպէք իրարու մօտ-մօտ ալդպիսի հսկայ ջահերի, որոնք ալրում են հանգարտորէն: Այնուհետև հանգցնելով՝ ածուխ են ստանում: Ի հարկէ՝ ալդպիսով ածուխի $\frac{3}{4}$ մասը կորչում է անօդուտ (Արաքս, եօթ տ. Գլ. Ա. Ստառն, եր. 74):

Տղամարդի և կնոջ տրհեստագործութիւնը մի շաբք օրինակներով իրարից որոշելուց լետոյ, մենք աւելորդ չենք համարում դնել ալստեղ մի նկատողութիւն պ. Բալայեանցի լոգուածից, որը թէև վերաբերում է երկրի մի մասին, բայց կարող է նմուշ լինել առհասարակ հայ գիւղացու գործունէութեանը: Նկատողութիւնը թէև խօսում է տղամարդի և կանանց լիրաւոնքների սահմանների մասին, բայց հէնց ալդսահմանները գաղափար են տալիս նաև տնտեսական գործողութեանց մասին:

«Եզր, ձին, գոմէշը, եշը, ջորին, դրանց բանեցնողը տղամարդն է, կինը ալդ կենդանիների հետ գործ չունի ևկովը, կաթնատու ոչխարը և գոմէշը, հաւը, կնոջ իրաւասութեան տակ է, որովհետև ալս կենդանիները տալիս են կաթ, ձու, բուրդ, որոնց պատրաստողը կինն է: «Յորեն, գարի, հաճար, բրինձ, կարտօֆիլ ցանողը և պատրաստողը մարդն է, ուստի ալդ մթերքների լիակատար իրաւունքը նրանն է (ծախսելու), իսկ կաթը, մածունը, պանիրը, իւղը, ձուն, թթուները, կանաչեղէնը, թխած հացը, լոբին, սիսեռը, սիմինդրը, գտնուում են կնոջ իրաւասութեան տակը: Այն գործիքները, որոնց գործածողը տղամարդն է՝ կացին, սղոց, բահ, թի, եղան, հոսելի, կամն, լուծ, թոկ, մուրճ, արօր, գութան, փոցի, տափան, գերանդի, մանգաղ և ալին, գտնուում են նրա անմիջական իրաւունքի տակը: Իսկ այն գործիքները, որոնց գործածողը կինն է, գտնուում են նրա լիխանութեան տակ, օր. տաշտ, մաղեր, կաթսաներ, կճուճներ, անօթներ, սանդերք, ճախարակ, վիլահանք, խնոցք,

գորդ և կապերտ գործելու գործիքները, ինչպէս և գորգերը, կապերտները, վերմակները, բարձերը, բուրթը, թելը և ալլնա: «Բըթից, թելից, բամբակից, վուշից գործուածներ պատրաստողը կինն է, նոյնպէս ձեռողը և կարողը, ուստի այդ բաների իրաւունքն էլ կնոջն է պատկանում»: (Գծեր հայ գիւղացու կեանքից. Արձ. 96 թ. № 76):

Գ. ԱՐՃԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՂՄՆԱԿԻ, ԲԱՑՑ ԱՆՎԱՐԴ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ:

(Օրինակներ):

Ամեն մի գիւղացի չէ կարողանում սայլ շինել, թէկուզ ամենահասարակ սայլ: Միայն գիւղի աւելի փորձառու անհատներն են կարողանում այդ: Բայց սրանք օգնութեան են հասնում իւրաքանչիւրին, առանց վարձ ստանալու: Երբ գիւղացին կամենում է սայլ ունենալ, նախ ձեռք է բերում փալուր, որը փոքր ինչ տաշում է, կարգի է բերում, ապա հրաւիքում է փորձառու հարեւանին, որը մի օրուակ ընթացքում պապում է սայլը: Այդ փորձառուն նոյն օրը հիւրասիրում է սալլատիրոջ տանը, եթէ միայն վերջինս հարուստ է: Երբեմն էլ սայլ կապողը որև է նուէր է ստանում, օրինակ փոքր ինչ ծխախոտ: Բայց վերջիններս անհրաժեշտ չեն և վարձատրութեան նշանակութիւն: չունին: Նոյնպէս խրճիթը կառուցանում է գիւղացին հարկաւոր գէպքում ուրիշների անվարձ օգնութեամբ:

Խրճիթը շատ հասարակ է. նա ոչ իսկական պատուհաններ ունի, ոչ էլ առանձին բարդ մասեր: Մի գուռ և մէկ բացուածք կտուրից: ահա բոլորը ինչ որ միացնում է խրճիթը դրսի հետ: Այնուամենայնիւ հիմքը փորելիս, քարը և փալուր ձեռք բերելիս, պատերը քաշելիս և կտուրը ծածկելիս պատրաստ են համագիւղացինները գործին մասնակցելու: Ոմանք իրանց սալլով գնում են գաշտից քարեր հաւաքե-

լու, որոնելով սարից վայր գլորուած քարեր, կամ հաւաքելով գետի ափերից, կամ անտառից և սալլը լցրած՝ վերադառնում։ Նոյն ձեռվ փայտը բերում են անտառից, իսկ եթէ զնուում է փայտը ուրիշներից, ապա նրան կրելը կատարում են համագիւղացիները ձրիաբար։

Խրճիթի պատերը շատ հաստ են շինում. նախ մեծ և լաւ քարերից երկու զուգընթաց շարքեր են կազմում, ապա լցնում են շարքերի արանքը մանր քարերով և խոնաւ հողով։ Նոյնպէս հասարակ, նահավետատկան ձեռվ ծածկում են կտուրը։

Մանաւանդ որոշ և բուռն կերպով մասնակցում են համագիւղացիները, երբ մի ընտանիք կամենում է թաղիք պատրաստել սեփական գործածութեան համար։

Գեղջկուհին լուանում և մաքրում է բըդի հարկաւոր քանակութիւնը. ապա հրտակրում են մի շարք ուժեղ երիտասարդներ, որոնց ֆիզիկական ոլորտ անհրաժեշտ է թաղիքը շինելու համար։ Ի միջի ալլոց ընտանիքը պատրաստում է գինի, արագ և փոքր ինչ ուտելիք։

Գործը կատարում է գոմում, որից ժամանակաւորապէս հեռացրած են կենդանիները։ Գոմի կտուրը պահուած է փալտեալ չորս սիւների վրայ, որոնք պատերից մի երկու քալլ հեռու են։ Չորս սիւների մէջ եղած տարածութեան վրայ թաղիք են փուում։ Սիւների աւելի հեռաւոր զուգերը միացնուում են երկու զուգընթաց չուաններով, իսկ աւելի մօտ սիւների արանքը ազատ է մնում։ Փոած թաղիքի վըրայ գցում են մի ջեղիմ, որի վրայ տարածում են բուրդութիւնի վրայ ջուր են սրսկում և ծածկում են երկրորդ ջեղիմով։ Ապա սրա վրայ լայնութեամբ մեկնում են մի գլանաձև փայտ, որի շուրջը զգուշութեամբ փաթաթում են ջեղիմները իրանց միջում եղած բըդի հետ միասին։ Ստացւում է մի հաստ պատաստ, որի ծալրերը ամուր կապում են չուանով։ Ալժմ միմեանց դիմաց կանգնում են երկու տղամարդեր չուանով չմիացրած սիւների արանքում և բոլոր ոլժով աքացում են պատատը, այնպէս որ վերջինս շարունակ գլոր-

տում է յետ ու առաջ: Որպէս զի կարողանան աւելի սաստիկ տքացել, երկու երիտասարդները բռնում են գերանները՝ միացնող չուաններից: Խոկ միւս երիտասարդները առ ալժմ կոնծում են և ըխտիլաթ անում: Երբ տղամարդկանց մի զոյդը լոգնում է, ապա նրան փօխարինում է երկրորդ զոյդը, իսկ առաջինը սկսում է հանգստանալ և կերպւխումին մասնակցել: Փամանակ առ ժամանակ բացում են պատառը, չուր են սրսկում բրդի վրայ և կրկին փաթաթում ու գործըշարունակում: Աշխատանքը տեսում է մի ամբողջ գիշեր: Եթէ կամենում են, որ թաղիքը շատ էլ հասարակ չլինի, երբ նա կիսապատրաստ է, գեղզկուհին կազմում է թաղիքի մակերևոյթի վրայ բամբակից կամ գունաւոր բրդից խաչեր, ծաղկիներ, տառեր, նկարներ և ալլն, որոնք յետոյ ամբանում են թաղիքի մէջ:

Բերած օրինակներից տեսնում ենք, որ գիւղացիք հարկաւոր դէպքում օգնում են միմեանց ձրիաբար: Այստեղ ներգործութիւն ունի փօխադարձ օգնութեան սկզբունքը, որով հետև օգնութիւն ստացող ընտանիքի անդամները մի ալանգամ իրանք էլ են գտնուում օգնողների շարքում: Բայց կտն գիւղական կեանքում օրինակներ, ուր փօխադարձ օգնութեան սկզբունքը աւելի որոշուելով ու պարզուելով ստացել է ընկերակցական արդիւնագործութեան կերպարանք: Կը բերենք սրա մի օրինակը:

Աւելի ամուր շէնքսի համար գիւղացիք կիր են գործածում: Կիր ձեռք բերելու համար ընկերանում են միքանի գիւղացիներ, որոնք ընդհանուր աշխատութեամբ կիրը պատրաստում են և իրանց մէջ բաժանում:

Գործը հեշտացնելու համար ընտրում են այնպիսի տեղ, ուր աւելի հեշտ է քար և վառելիք (փայտը) հասցնել: Գետակի զառիվայր ափում մի փոս են քանդում, որի բերանը դարձրած է գէպի ջուրը, իսկ կտուրը ինքը եզերքնէ: Այդ կտուրը 1—2 արշին հաստ է լինում. նրա մէջ բացում են խողովակածեն անցքեր օգի շարժման համար: Ապա փոսի մէջ քարեր են հաւաքում կամարածեն շարքերով, միայն

այնպէս, որ օդը կարողանալ նրանց մէջերով շարժուելի Քարերը չեն բռնում ամբողջ տարածութիւնը, այլ ազատ տեղ են թողնում վտուելիքի համար:

Ըսկերացած գիւղացիները միջանի օր մնում են ալստեղ և հերթով հսկում, որ կրակը անդադար շարունակուի: Քարերը հաւաքում են գետակից, իսկ փալտը բերում են մօտակայ անտառից: Գործը վերջանալուց յետով, գործարանը անտէր են թողնում և նա հետզհետէ փչանում է:

Մենք ի նկատի ունեինք մինչև այստեղ, գուտ գիւղական ընտանիքը, որի վրայ քաղաքալին կեանքը դեռ 202ափելի ազգեցութիւն չէ արել: Այդպիսի ընտանիքները դեռ շատ կան մեր յետ ընկած գիւղերում, մանաւանդ Տաճկական Հայաստանում: Բայց քաղաքալին կեանքի ազգեցութեան տակ հետզհետէ անյետանում են գիւղական ընտանիքի նախնական աւտանդութիւնները: Արգէն այն գիւղերում, որոնք մօտ են, կամ տնտեսապէս կախուած են քաղաքից, նկատուում է նահապետական ընտանիքի քալքայումը, իսկ ինքը քաղաքալին ընտանիքը, ալդ ուղղութեամբ բաւական հեռու է գնացել: Այստեղ մենք նախ նկատում ենք, որ եղբայրների կանուք (հարսները) շատ էլ տրամադիր չեն միասին ապրելու: Վիճաբանութիւններն ու վիրաւորանքը սկսում են ամենօրեալ երեսլթները գառնալ: Բայց որովհետև եղբայրները տնտեսապէս իրար հետ կապուած են և իւրաքանչիւրը չէ կարող առանց ալլաւլի անկախ տընտեսութիւն ունենալ, ուստի սրանք գտնում են միջին ճանապարհը, որը մեր փոքր կամ գաւառական քաղաքներում սովորական երևոյթ է: Այսինքն, նրանք բաժանում են իրանց տնտելին կեանքը, ամէն մէկը ունենում է իւր առանձին կրակ-ճրագը, տան սարք ու կարգը, բայց դուրսը, շուկայում միասին են աշխատանք անում: Փոքրիկ քաղաքներում, մանաւանդ 20—30 տարի առաջ, կարելի էր նկատել այնպիսի բակեր, որոնք պատուհաններից գուրկ և միայն

մի ընդհանուր դուռ ունէին, որից ներս մտնելով գտնում էիք մի շարք բնակարաններ, որոնց իւրաքանչիւրը մի եղբօրն էր պատկանում: Այդպիսի բակը ուրիշ բան չէ, բայց եթէ ոչ՝ գիւղական նահապետական տունը, որը ընդարձակուել է անտեսական և քաղաքակրթական նոր պայմանների ազգեցութեան տակ: Սա ներկայացնում է հայկական տան և ընտանիքի էվոլյուցիալի (գարգացողական) երկրորդ աստիճանը:

Բայց ընտանիքի ձևակերպութիւնը շարունակում է և վերջ ի վերջու հասցնում է այնտեղ, որ եղբայրները իրանց տնտեսութիւնն էլ (գումարն էլ) միմեանցից բաժանում են և իւրաքանչիւրը դառնում է քաղաքացիական անկախ ընտանիք: Այդպիսով, ստանում ենք մենք այն ընտանիքը, որը բաղկացած է հօրից, մօրից և օրանց տակաւին անչափահաս, կամ գոնեա չամուսնացած զաւակներից: Ամուսնացող եղբայրները չեն կարօգանում միասին ապրել, իսկ նրանց ծնողները ապրում են որդիներից մէկի, մեծ մասամբ ամենակրտսերի մօտ. ինչ էլ լինի, ծերունին և պառաւը չեն ունենում այլն այն լորգանքն և ազգեցութիւնը, որ նրանք ունէին գիւղական բարդ գերգաստանի մէջ:

Այսպէս կերպարանափոխուած քաղաքացի ընտանիքին պակասում են այն պայմանները, որոնք գրգում են գիւղական ընտանիքին, որ ինչը պատրաստէ իրան հարկաւոր պիտույքը: Սրան աւելանում է և այն, որ քաղաքացի ընտանիքը աւելի ժամանակ է գործ գնում ոչ-արհեստական զբաղմունքի վրայ, որ նա աւելի նուրբ իրեր է պահանջում: Այդ պատճառով ձգտում է նաև տնային սովորական գործերից (մաքրելուց, լուանալուց և ալլն) աւելի մնացած ժամանակը՝ գործ գնել աւելի նուրբ առարկաներ պատրաստելու, թէև գլխաւորապէս սեփական գործադրութեան համար:

Այդ գործողութեան մէջ կարելի է երկու դիպուած որոշել:

1. Ընտանիքի անդամները պատրաստում են սեփական գործածութեան համար բոլոր սովորական կերպարները,

կաթնեղէն (իւղ, մածուն), եթէ ընտանիքը գոնեա մի կոյ
ունի, ինչ որ յաճախ է պատահում գաւառական քաղաքնե-
րում։ Բացի այդ, ընտանիքը պատրաստում է սովորական
հագուստը կանանց և երեխաների համար, ներքին հագուս-
տը տղամարդկանց համար, սպիտակեղէնը, տնկողինը և ալլու-
Մրանց համար հարկաւոր նիւթերը գնուում են փողով պատ-
րաստ կամ կիսապատրաստ։ Յետոյ ընտանիքը զործում է
գուլպաներ և երբեմն ձեռնոցներ և ալլն. բուրդը գնուում է,
տանը նախապատրաստուում և կամ ընտանիքի կինարմատ-
ներից մէկի, կամ մի օտար կնոջ ձեռքով թել մանւում-
Աղքատ ընտանիքը հացն էլ ինքն է թխում, որպէս գիւ-
դում, իսկ փոքր ի շատէ ապահով ընտանիքը հացթուխ է
հրաւիրում, որի մասին յետոյ։

2. Ընտանիքը արհեստագործում է սեփական գործա-
ծութեան համար ուրիշների անվարձ օգնութեամբ։ Բոլոր
կարեոր գէպքերին՝ հարսանիքին, մեռելահացին և ալլն,
ընտանիքը գործի է հրաւիրում մօտ ազգականուհիներին և
հարեւանուհիներին։ Մրանք օգնում են ընտանիքին հացը
թիւելու, քաղցրեղէններ շինելու ու աչքի ընկնող հագուս-
տեղէն և անկողին պատրաստելու մէջ։ Եթէ հագուստը
կարեւում է թանգարին կտօրից, օրինակ մետաքսից կամ
մախմուրից, և ընտանիքում չկայ գրա համար փորձառու-
կին, այն ժամանակ օգնութեան է հասնում փորձառու
մօ-
տաւորներից մէկը։ Ի հարկէ բոլոր այդ գէպքերում, մաս-
նակցող կանալք հիւրասիրուում են յաճախ իրանց երեխանե-
րի հետ։ բայց ոչ ոքի մաքովը չէ անցնում այդ հիւրասի-
րութիւնը վարձ համարել, կամ որև է վարձ պահանջել։

Քաղաքացի ընտանիքը շատ տրամադիր չէ ուրիշների
համար գործելու՝ փող աշխատելու մօտք։ Նա աւելի կամե-
նում է իր աշխատութեամբ պատրաստուած պիտուքը ինքը
գործադրել, կամ ինչպէս ասում են ամբողջ տուն ստեղ-
ծել։ Երբ մի հայ օրիորդին գովել են ցանկանում, ասում
են, թէ նա ընդունակ է ռամբողջ տուն գոյացնելու։ Առ-
հասարակ ամօթ է համարւում ընտանիքին պատկանող որև-

է առարկալ ծախել. գա տեղի է ունենում միայն ծալրահեղ դէպքերում, այն էլ ծածուկ կամ միջնօրդների ձեռքով:

Միւս կողմից, որովհետեւ ընտանիքում պատրաստած բարիքները մեծ մասամբ չեն կարող եւրոպականների հետ մրցել, ուստի և ընտանիքի արհեստագործութիւնը չէ կարելի խսկական մտքով տոնալին արդիւնագործութիւնը համարել, որպիսին օրինակ տեղի ունի Ռուսաստանի գիւղերում։ Սակայն տեղ-տեղ օրինակներ կան, որոնք ցոյց են տալիս, թէ հայ ընտանիքը որոշ պայմաններում կարող էր մրցել օտար արդիւնագործութեան հետ։

Վերցնենք օրինակ պթուին արհեստագործութիւնը Շամախում։

Թոռը մետաքսաթելից գործած կանացի գլխաշոր է, որը մի մետր կամ աւելի երկարութիւն է ունենում և փոքր ինչ պակաս կամ նոյնքան լայնութիւն։ Գինը 5-ից մինչև 15 բուրլի և աւելի, նայելով կշիռին, նրբութեանը և սպիտակութեանը (եթէ ներկուած չէ)։ Օրիորդները և զահիլ հարսները թոռը սպիտակ են ծածկում կամ կարմիր, իսկ այրի կանայք կամ պատւաները կանաչ կամ կապուտ։

Թոռը գործում են Շամախու բոլոր հայ ընտանիքներում, բայց ոչ մի մահմեղական կին չէ հասկանում արդ արհեստը։

Թոռը գործում են միլով և կեռասեղով։ Ցարմարութեան համար գործ են ածում այսպէս անուանուած գէղգահը-ը, որ ներկայացնում է մի եռանկիւնի պրիզմա, կաւից, երբեմն էլ քարից շինած։ Պրիզման ընկած է մի երեսի վրայ, որի հակառակ կողի ծալրերում թաղած են երկու կտոր եղեգն կէս-կէս արշին երկայնութեամբ։ Եղեգները ուղղահայեաց են տնկած լինում։ Նրանց մէջ կապած է մի թել, որից կապում են թոռի ծալրը և որքան գործում են, փաթաթում են եղեգներին։ Խւրաքանչիւր տան մէջ կարելի է գտնել մէկ կամ մի քանի արդարիսի գէղգահներ։ Թոռ գործող կինարմատը ծալապտաիկ նստում է գօշակի վրա և դնում է գէղգահը իւր հանդէպ։

Խնքը - գործը՝ համարւում է աչքերին վնասակար և սիրտ մաշող, ուստի հարուստ կանալը հազիւ են նրանով զբաղլում. իսկ չքառը ընտանիքներում յաճախ են թոռ գործում. Անընդհատ աշխատելով, մի կին կարող է վերջացնել ամսական մէկ թոռ, բայց շատ անդամ գործը ամիսներ է տևում, որպէս միայն ազատ ժամանակն են նույիրում նրան Երբ թոռը արգէն ամբողջութեամբ գործուած է, եփում են նրան սապոնաջրում. Որքան սպիտակ և փայլուն (արծաթափալլ) գուրս գայ թոռը եփելուց յետոյ, նոյնքան աւելի արժէք է ունենում. որքան դեղնագոյն է լինում, այնքան պակաս է գնահատուում:

ԵՐԿՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ.

ՎԱՐՊԵՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

Շատ բնական է, որ գիւղացին ալնպիսի բարիքներ է պատրաստում, որոնք իւր ընտանիքին հարկաւոր են. Բայց կան հազարաւոր անհատներ, որ նոյն կամ աւելի եռանդով և ոյժ գործ դնելով, այնպիսի բարիքներ են պատրաստում, որոնց իրանք ոչ մի դէպքում չեն գործադրելու. Այսուղ, ի հարկէ, նրանք ի նկատի ունին նախ և առաջ ոչ թէ պատրաստուող առարկան, այլ այն վարձատրութիւնը, որ իրանց աշխատանքի (փութաջանութեան, չտրչարանքի, փորձառութեան...) համար պիտի ստանան. Այդպիսի անհատներից է կազմւում արհեստաւորների գասակարգը, որ բաւական բազմաթիւ է հայոց աշխարհում (հայաբնակ գիւղերում): Ամենուրեք զտնում ենք նրանց եռանդով աշխատելիս, մերթ իրանց իրճիթում (ուրիշների համար), մերթ գիւղից գիւղ թափառելիս, մերթ պարերական շուկաներում, մերթ քաղաքի մշտակալ արհեստանոցներում:

Եւ ահա հարց է ծագում, թէ ինչ պատկեր է ներկայացնում այդ գասակարգը, որտեղից է նա ծագում, ինչ ձե-